Մենք անցանք մի եկեղեցու դռնից, որտեղ մինը միւսի ետեւից մտնում էին եւ դուրս էին գալիս երեխաներ, գրքերը թեւքերի տակ առած:

— Երեւի այստեղ դպրոց կայ, — հարցրեց Ասլանը, — աշակերտներ են ման գալիս:

— Կայ, — պատասխանեց վարպետ Փանոսը, — մեր քաղաքի առաջնակարգ դպրոցներից մէկն է. եթէ ժամանակ ունէք, մտնենք, դուք գաղափար կը ստանաք մեր նոր սերունդի մտաւոր զարգացման մասին:

Մտանք վարժարանը, որ գտնւում էր եկեղեցու բակումը: Իմ առջեւ իսկոյն նկարոեցաւ տէր Թոդիկի դպրոցը իր բոլոր այլանդակութեամբ: Աշակերտները այստեղ եւս ածած էին մի դասատան մէջ եւ խառն կերպով նստած էին հասիրների (փսիաթ) վրայ: Բոլորը միասին կարդում էին, ամէն մէկից մի տեսակ ձայն էր լսւում, որովհետեւ որքան աշակերտներ կային, այնքան զանազան գրքեր կային նրանց ձեռքում: Ամէն մէկի տանը, եթէ պապերից մնացած մի դիրք էր գտնոել, հայրը տոել էր որդու ձեռքը, ասելով. «տար վարժապետիդ ասա, որ դրա վրայ կարդացնէ»... թող այն գիրքը Սաղմոս լինէր, Ժամագիրք լինէր, Կիպրիանոս լինէր, Պղնձէ քաղաք լինէր, հին բժշկարան կամ երազահան լինէր, միեւնոյն է, բաւական է, որ գիրք էր: Զանազանութիւնը այս վարժարանի եւ տէր Թոդիկի դպրոցի այն էր միայն, որ ես առաջին անգամ այստեղ լսեցի, մի քանի գրքերի անուններ, որպիսիք էին քերականութիւն, ճարտասանութիւն, տրամաբանութիւն եւ այլն: Այդ գրքերը գրավարժութեան համար, որպէս ընթերցանութեան գրքեր, կարդում էին նոյն եղանակով, ինչպէս կարդում էին Աւետարանը: Երեւում էր, որ վերջին գրքերը ունեցող աշակերտների տանը ուրիշ գրքեր չէին գտնոել, որ աւելի յարմարը տային նրանց ձեռքը:

Վարժապետին կոչում էին Սիմոն պատոելի. նա մի ժամանակ Կ. Պոլսում սափրիչ էր եղել, եւ բաւականին հաստլիկ ու մսուտ մարդ էր, որպէս սովորաբար լինում են սափրիչները: Նրա դէմքը, անկանոն խմելուց, ստացել էր մի տեսակ լրջագոյն-կարմրութիւն, որի նմանը կարելի է տեսնել հնդկահաւի գլխի վրայ, իսկ երեսի կաշին հաստանալով, բոլորովին կորցրել էր իր կոկութիւնը եւ նարնջի կեղեւի նմանութիւն էր ստացել: Քթի վրայ, որը իր մեծութեամբ ընդարձակ տեղ էր բռնում, երեւում էին կասկածաւոր կարմիր բծեր: Այսպիսի դէմքեր շատ ընդունակ են կեղծաւորոելու, թէեւ քսութիւնը աւելի չէ յարմարւում նրանց: Նրա հագուստը մի ծիծաղելի խառնուրդ էր եւրոպականից եւ ասիականից: Գլխին դրած ունէր տաճկի կարմիր ֆէս, որի վրայ քրդի ձեւով փաթաթել էր երկու «յազմաէ կոչոած թաշկինակներ. հագել էր վանեցու երկայն անթարի, կողքից ճղած լայն դրօշակներով, որի վրայ հագել էր մի